ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 312-Հ

«14» 07 2023 թ. գ. Երևան

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶ ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի՝ «Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ Աշոտ Մարտիրոսյանի (լիազորությունները կասեցված) նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին» 2023 թվականի հուլիսի 13-ի որոշումը, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 62-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Արմավիրի մարզի դատախազության ավագ դատախազ Աշոտ Մարտիրոսյանին ազատել զբաղեցրած պաշտոնից:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2023 թվականի հունիսի 7-ից Ա. Մարտիրոսյանի լիազորությունները կասեցված լինելու պայմաններում վերջինիս հսկողության ներքո գտնվող քրեական վարույթները և մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերը բաշխվել են Արմավիրի մարզի դատախազության այլ դատախազների միջև, ինչը հանգեցրել է Արմավիրի մարզի դատախազության դատախազների աշխատանքների ծանրաբեռնվածության աճին, ինչով պայմանավորված՝

ՀՀ դատախազության տվյալ ստորաբաժանման աշխատանքների կազմակերպումը պահանջում է համարժեք լուծումներ, սույն որոշումը ենթակա է անհապաղ կատարման՝ ելնելով Արմավիրի մարզի դատախազության գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու հանրային շահերից:

Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ